ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 162-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. 2025թ. Վեդի համայնքի բյուջեում փոփոխությունները պայմանավորված են համայնքում նոր ծրագրերի և առաջացած խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:
2. ՀՀ կառավարության 2025թ. մարտի 27-ի Ն 356-Լ որոշմամբ հաստատված բուսաբուծության աջակցման ծրագրի շջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարաության և Վեդու համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի շրջանակներում Վեդի համայնքին հատկացվելու է 4.993.151դրամ, որի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել հատկացվող գումարի չափով Վեդի համայնքի 2025թ. բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ եկամտային և ծախսային մասերում:
3. Բազմազավակ /5 և ավելի երեխա ունեցող/ անապահով ընտանիքներին եռամսյակային աջակցություն հատկացնելու, ինչպես նաև Արցախյան և ՀՀ պաշտպանության , մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներին օրացույցային տարվա ընթացքում մեկանգամյա աջակցություն տրամադրելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել Վեդի համայնքի զարգացման հիմնադրամին հատկացնել ֆինանսական միջոցներ նվիրատվության տեսքով: Որի հետ կապված անհրաժեշտ է 2025թ. բյուջեում կատարել համապատասխան փոփոխություն:
4. Դատարան ներկայացվող հայցադիմումների համար պետական տուրքերի վճարման համար նախատեսված գումարը անհրաժեշտ է ավելացնել 1.500.000դրամի չափով:
5. Վեդի համայնքում 2024թ. հաստատված և շարունակվող սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից կատարվել է հատկացում, որի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել հատկացված գումարի չափով Վեդի համայնքի 2025թ. բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ եկամտային և ծախսային մասերում:

Առաջացած խնդիրների կարգավորման համար, Ձեր հաստատմանն է ներկայացվում 2025թ. բյուջեի անհրաժեշտ փոփոխությունները ըստ առանձին տողերի.

Ավելացնել՝ Եկամտային մասի

1/ Այլ ոչ հարկային եկամուները 4.271.326դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 4.271.326դրամ:

2/ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման տողը /սուբվենցիաներ/ 294.231.088դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով՝ 587.005.487 դրամ:

Եկամտային մասում ավելացված գումարը համապատասխանաբար ավելացնել բյուջեի վարչական և ֆոնդային մասերի

վարչական մաս

ա/ Գյուղատնտեսություն ծախսային ծրագրի 4729/այլ. նպաստներ բյուջեից/ հոդվածը 4.847.720դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 4.847.720դրամ

բ/ Գյուղատնտեսություն ծախսային ծրագրի 4111/աշխատավարձեր/ հոդվածը 145.431դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 145.431դրամ

ֆոնդային մաս

ա/ Նախադպրոցական կրթություն ծախսային ծրագրի 5113/շենք.շին. կապ. նորոգում/ հոդվածը հոդվածը 161.415.008դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 465.007.208դրամ:

բ/Գազաֆիկացում ծախսային ծրագրի 5112/շենք.շին.կառուցում/ հոդվածը 17.180.156դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 41.461.756դրամ:

գ/ Ոռոգում ծախսային ծրագրի 5112/շենք.շին.կառուցում/ հոդվածը 115.635.923դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 758.657.290դրամ:

Պակասեցնել՝ Ծախսային մաս

1/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը 9.000.000դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 110.903.000 ՀՀ դրամ:

Համապատասխանաբար Ավելացնել՝

1/ Վարչական բյուջեի սոցիալական աջակցություն ծախսային ծրագրի 4819/նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածը 7.500.000դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 25.000.000 ՀՀ դրամ:

2/ Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ ծախսային ծրագրի 4823/պարտադիր վճարներ/ հոդվածը 1,500.000դրամով, տարեկան ճշտված պլանը սահմանելով 1.700.000 ՀՀ դրամ:

Կատարված փոփոխություններից հետո Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 110.903.000 ՀՀ դրամ:

Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ա. Ավետիսյան